

**Ցիօք,** Մայիս քսաներկուցին, ժամը մէտ կին, կ'իմացնէ որ կնդրիսի պաշարին կէսը սպառած է: Ըւսափ, կացութիւնը ստուգելու համար պէտք է երկիր իջնել, բան մը՝ որ օգոյ մէջ անկարեի է, մանաւանդ նաւարկութեան մեր յատուկ պայմաններուն մէջ, բեւեղին այնքան մօտ:

Երկիր իջնելու նպաստաւոր կէտի մը վրայ կը գտնուինք, միաըր - լարսին կը հարցնէ թէ իջնենք. ես կը վախնամ ո՞ր մեր երկիր իջնելէն ու այն կէտին հաս-

նելէն առաջ՝ սառնեղէն պատերը սեղմուին: Հարիւր մեղք բարձրութեան կ'իջնենք զննելու համար, և որովհետեւ սառոյցին երեսյթը մեր նապատակին հասնելու կարեւ լուութիւն ընծայել կը թուի, տասը մեղք բարձրութեամբ կը սաւառինք, և Ծիփըր-Լարսին հովին ուղղութեամբ կ'իջնենէ գործիքը՝ անգամ մըն ալ այն կէտին վրայէն անցնելու նպաստակով:

(Եարումակելի) ԱՌԱՅՍ ԱՄՈՒՆՏՈՒԾԻՆ

Թրգմ. Հ. Սրբովան ՌԽԼՊՀ ՌԱԴ

## ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՈԶԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)

### Ե Զ Ե Խ Ա Խ

Ա. — Ա. Ե Ք Ս Ա Ն Դ Ի Ս Պ Ե Ն Դ Ի Ա Ր Ե Ա Ն

#### I. Կօմպօփիտօրը

Քսաներորդ դարի ամենանշանաւոր հայ կօմպօփիտօրներից մէկն է Ալ. Սպենդիարեանը, որ իր առաջնորդ սյժով և երաժշտական լուրջ գիտական պատրաստութեամբ գրաւել է արդէն ամենախիստ էսթէտ քննադատների ուշագրութիւնը:

Քսան և հինգ երկար ու ծիդ տարիներից ի վեր ծառայում է նա երաժշտական ֆրոնտում, միշտ հաւատարիմ մնալով արևեսի սրբազն դրօշին: Այդ ցասան և հինգ երկար տարիների ընթացքում հրաւել է նա երաժշտական թանկագին նևազներ, որոնց այսօր տեղ են բռնում ոչ միայն Մօնկայի և Պետերբուրգի, այլ և խորհրդային բուրու երկիրների սիմֆոնիքական համելքներում:

Այդ ստեղծագործութիւնները, որոնք գրւած են արևելեան թէմայով, իրենց ամբողջութեամբ ու երանջներով սիմվոլն են արևելեան, զլիաւրապէս Ղրիմի թաթարական և ճայկական երաժշտութեան:

Այլ արևելականութիւնը ոչ միայն գեղարվեստական է, այլ և անկեղծ, քնական, թարմ և գունեղ: Այդ սեսակէտից անա Սպենդիարեանն եղակի է:

Երաժշտական աշխարհում եղել են բազմաթիւ երաժշտազրողներ, որոնց փորձել են արեւելեան կօլորիտը (երանցը, գունագեղութիւնը) կարմիր թելի նման անցկացնել իրենց երգերի մէջ, բայց նրանց այնքան էլ այլդութիւն չեն ունեցել, իրեւ բնորոշ փաստ յիշատակինը միայն Ռուբեն Շտայնը, որ աշխատել է իր «Դեւի մէջ դրոշմել արևելեան կնիքը, բայց նա չի կարողացել հասնել իր կէտնպատակին:

Ալ. Սպենդիարեանն առաջնորդ է, որ երաժշտութեան մէջ մացնում է արևելականութիւնը:

լեան կուրիտը, իր նուրք և տիպիցական գծերով։ Դա նրա ամենաբնորոշ առանձնայատկութիւնն է և հինգ այդտեղ էլ կայանում է նրա ամենամեծ արժանիքը։

## II. Նրա կեանքն ու գործունէութիւնը<sup>1</sup>:

**Ակ.** Ապենդիքսեանը ծննդել է 1871 թ. Հոկտեմբեր 20ին Տաւրիկեան նահանգի Նեպր գետի ափում գուռած կախովկա աւանում, մի հարուստ հայ վաճառականի տանը։ Նրա մէջ երածշտութեան սէրը զարթնում է զեր ևս մանկութեան շրջանում։ Դեռ երեք տարեկան հասակում նա ցոյց է տալիս ընդունակութիւն դէպի գեղարւեան առհասարակ, մինչեւ իսկ քրաւելով ծովանկարից Ալյավովսկու ու շաղաղորովթիւնը։

Նրա երածշտական զարգացման գործում նշանակալից դեր է խաղում իր մայրը, որ գերազանց դաշնականար էր։ Նա իր դաշնամուրի նւազներով հինգ տարեկան մանուկի սրտում զարթեցնում է երածշտութեան սէրը և միաժամանակ անձամբ առաջ տանում նրա երածշտական կրթութիւնը։ Ալեքսանդրն երկար ժամանակ նստում է մօր դաշնամուրի առաջ և նւազում իրեն դուր եկած և լսած մէջորիաները։ Ալյավիսով ընտանեկան միջավայրում ստանում է նա բազմերանգ առպատրութիւններ և այդտեղ էլ վառում է նրա սրտում երածշտութեան սիրոյ բոցը։

1882 թիւն Ալեքսանդրի ծնողները տեղափոխում են Ղրիմի Սիմֆերոպոլ քաղաքը, ուր նա մտնում է տեղական զիմնազիան և վերջացնում 1890 թիւն։ Այդ դպրոցը սակայն նրա երածշտական զարգացման գործում առանձին մի դեր չի կտառարամ։ Նոյն շրջանում նա տան առնում է պիհանօքրուտէի (զաշնամուրի) և ջութակի առանձին դասեր և կարճ ժամանակակիցցոյում զգալի առաջադիմութիւն է ցոյց տալիս։ Այդ ժամանակաշրջանում էլ նա ծանօթանում է տեղական թաթար մողովրդական երգիրի հետ, որնց նրա վրայ խոր տպաւորութիւն են թողնում։ Այդ ազգեցովթիւնների ներքոյ յօրինում է նա պարերգեր և բայլերգեր։

Անուհետեւ Սպենդիարեանի առաջ բացում է մի նոր աշխարհ Գիմնազիան վերջացնելուց յետոյ անցնում է Մօսկու և մոնում համալսարանի իրաւարանաւեան կան ֆակուլտետը։ Համալսարանում ստանում է նա երածշտական բազմազան տպաւորութիւններ, առանձնապէս ազդում է նրա վրայ ուսանողական 70 հոգուց բարկացած սիմֆոնիկ նւագախումբը, որին մասնակցում է նա իրեր առաջին ջութակ նւազող։ Նա համալսարանում միաժամանակ շարունակում է իր կօմպօգիտորական փոքրերը, որոնց լրւը հասնում է Ն. Ս. Կլենօվսկուն (Թիֆլիսի երաժշտական զորոցին՝ նախկին զարիչը), որ զեկավարում էր ուսանողական նւազախումբը։ Կլենօվսկուն ծանօթանալով նրա մի երածշտական գործի հետ, խորհուրդ է տալիս լրջօրէն պարապելու երածշտութեան թէօրիայով։ Սպենդիարեանը որոշ տառանումներից յետոյ կլենօվսկուն մօն հիմնարարական ուսումնասիրում է երաժշտութեան թէօրիան։ Մօսկավում յաճախում է նաև կօնցերտները, օպէրանները և շատ անգամ իր ջութակով մասնակցում համերգներին։ Նոյնպէս նա շարունակ շփման մէջ է մտնում Մօսկուայի գեղարւեստական ընտանիցների հետ, որնց յաճախակի կազմում են երածշտական երեկոյթներ և նւազում երածշտական առաջնակարգ կտորներ։ Ալյավիսի միջավայրում նա ստանում է երածշտական բովանդակալից տպաւորութիւններ։

1. Կենսագրական տեեաները տեւէ և մեզ հինգ ինչը՝ կոմպօգիտորը, իսկ ըննադատական տեղեկութիւնները ենց բերել ուսուական և հայկական թէրթերց, Ա. Ե.

Մօսկայում ուսանում է նա եօթը երկար տարիներ և միայն երկու տարի  
ընդհանում է կլենօվսկու բացակայութեան պատճառով:

1896 թւին կլենօվսկու խորհրդով նա Մօսկայից անցնում է Պետերբուրգ  
(այժմ Լենինգրադ) և տաղանդաւոր ուսւ կօմպօզիտոր ու Պետերբուրգի կօնսէրւա-



Բրոֆէսօր Ալեքսանդր Սպենդիարեան

տօրիայի բրօֆէսօր Ռիմսկի-Կորսակովի մօտ շարունակում է երաժշտութեան թէօ-  
րիայի դասելը. Կօրսակովն իր ցուցմունքներով ինոր ազգեցութիւն է թողնում նրա  
վրայ: Պարապմանըները տեսում են 1896–1900 թւականը:

1900 թւին Սպենդիարեանն աւարտում է Պետերբուրգի կօնսէրւատօրիան և  
իրու ցննական շարադրութիւն գրում «Կօնցերտային ովկերտիրա» (երաժշտական  
նախերգանք) մեծ սիրֆոնիկ օրկէստրի համար: Այս ուվերտիրան առաջին անգամ

նւազում են Պաւլօվսկու ցաղաքում (Պետերբուրգի մօտ), կալկնի դեկավարութեամբ, Այդ օրւանից էլ սկսում է նրա երաժշտական գործունեութիւնը:

1901 Բուլիսին Սպենդիարեանը Պետերբուրգից անցնում է Ելալթա և ամուսնանում Ելալթան զանում է նրա երկրորդ Հայրենիքը և միաժամանակ նրա երաժշտական ստեղծագործութիւնների գլխաւոր կենտրոնը, Այդուղի է գրում նա իր ամենաառաջին երաժշտական լաւագոյն գործերը, որոնց առաջին անգամ նւազում են տեղական սիմֆոնիցական օրէկսարում: Այդ օրւանից էլ նա յայտնի է դառնում իրեւ շնորհալի կօմպօզիտոր:

Մի հանգամանց սակայն աւելի է հոչակում նրա անունը: Ելալթան լինելով ծովափնեայ նշանաւոր կենտրոն, իրուսաստանի զիմանար ցաղաքութիւնը օդափոխութեան են զալիս այնտեղ յայտնի կօմպօզիտորներ - կլազունով, Գեղար - Քիւի, Պլումֆելտ, որոնց համերգներում լսելով նրա երաժշտական գործերը, առաջարկում են աւելի մեծ կենտրոններում եւս նւագել: Այնուհետեւ Սպենդիարեանի ստեղծագործութիւնները զանում են Մուսկայի և Պետերբուրգի սիմֆոնիցական համերգների առաջնակարգ կտորները: Շատ անգամ արեւստագէտն երկու - երեք ամսով անցնում է Պետերբուրգ, երբեմն էլ Մուսկա և ինցն է զեկավարում օրէկսարու: Շնորհիւ այդ հանգամանցի նա մեծ ժողովրդականութիւն է ստանում. Հրատարակիչները լոյս են ընծայում նրա գործերը, որոնց նւազում են նաեւ Եւրոպայում: Այս մերիկայում:

Սպենդիարեանի այդ շրջանի ստեղծագործութիւնները գերազանցօրէն կրում են ուսական չկօլայի ազդեցութիւնը:

Այնուհետեւ թևակոխում է նա իր երաժշտական կեանքի երկրորդ շրջանը:

Այդ շրջանում նա հակում է զէպի արեւելեան երաժշտութիւնը: Այդ հանգամանցն ունի իր զրդապատճառը: Ուզիլ տասնեօթը երկար տարիներ ապրելով Դրիմում, շրջում է թաթարական զիմանար զաւաներն ու զիւղերը և հաւաքում թաթար ժողովրդական երգերը, լէզէնզանները և մշակում: Այդ ուղղութեամբ է զրում նա յայտնի «Դրիմի և կոկոները» և միաժամանակ ստեղծագործում է արեւելեան ոգով ինցնուրոյն երգեր և լէզէնզաններ օրէկսարի և դաշնամուրի համար: Նոյն ոգով էլ նա զրում է իր զուխ - գործոցը՝ «Երեք արմանենի» (խոսք Պուշկինի) սիմֆոնիկ նկարը, որից ուսւ յայտնի թալէտի Մաստէր՝ Թօկինը 1912 թւին մշակում է մի բալէտ և նրա երաժշտութիւնով թերլինում ներկայացնում: Այդ առիթով Սպենդիարեանն անցնում է թերլին: Բալէտը լաւ տպաւրութիւն է թողնում գերման զեղարեկստաէր հասարակութեան վրայ, իսկ ժամանակակից թերլինը նիրում են գնահատական էլեմետ: Այնուհետեւ Սպենդիարեանը թերլինից անցնում է Պետերբուրգ, ապա Ելալթա:

1916 թւին զնում է նա թիֆլիս և տալիս է մի շարք համերգներ, որոնց հասարակութեան կողմից մեծ ընդունելութիւն են գտնում: Թիֆլիսում նրա ստեղծագործութիւնների համար բացում է մեծ ասպարէզ և նա ծգոտում է աւելի լուրջ և խոշը երաժշտական գործեր յօրինել: Այդ միջավայրում նա առանձին սիրով ուսումնակիրում է հայկական ժողովրդական երգերը և հետաքրքրուում հայ զեղարեկան զրական օպէրա գրելու իրէան:

1916 թւի աշնան տեղափոխում է Թիֆլիսի մօտ գտնող ծովափնեայ Սուուկ աւանը, որ ապրում է մինչեւ 1924 թացանը: Դրիմում տիրող բաղաբացիկան կունենար և ընտանեկան ծանր հանգամանցները թոյլ չեն տալիս նրան նկրւելու իր սիրած իդէան՝ օպէրայի երաժշտական ստեղծագործութեան: Ցեղափոխութեան ամրող շրջանում նա Սուուկում մտնում է համարեայ կղզիացած և

միայն 1918 թվի Յունիսին սկսում է զրել իր օպէրան, որից կազմում է նախ երեք մեծ կտորներից բաղկացած մի մեծ սուփում: 1923-24 թ. աշխատում է նա զիմաւորապէս օպէրայի վրայ և գրում մի շաբաթ նոր կտորներ օրէսարի, խմբի և սօլո երգեցողութեան համար: Նոյն ժամանակաշրջանում նա ակադեմիկ բական ֆիւարմնիայի (երաժշտաէրների) կողմից հրահրուում է Պետրոգրադ և իր ստեղծագործութիւններով մի մեծ սիմֆոնիկ համերգ է տալիս, որ մեծ գեղարքեաստական յաջողութիւն է ունենում:

Նոյն կոնցերտը Յունաւարին տալիս է նա Մօնկւայում: Մամուլը և գեղարքւատական հասարակութիւնն ընդունում են նրան շատ սիրալիք կերպով:

Նոյն թվի հոկտեմբերին Սպենդիարեանը լուսողկանաթ կօմիսար Ասրանազ Մուսաւանի հրաւերով անցնում է Երևան և նէփրում կօնսէրւատօրիայի երաժշտական աշխատանքներին: Երկանում նա առաջին հերթին աշխատում է վերջացնել «Ալմաստի ինստրումէնտովկան», որ օպէրան ամբողջապէս պատրաստ լինի մինչև գարուն: Առանձին սիրով ուսումնասիրում է նաև հայ կենցաղը և հայ ժողովրդական երգը:

— «Ես կ'աշխատիմ ուսումնասիրել հայկական երգը, ասում էր նա մեզ, որ հիմք պիտի դարձնեմ իմ տպագոյ սիմֆոնիքական պատկերների համար: Ես մտադիր եմ ձահապարհորդութիւն կատարել Հայուստանի սահմաններում, հայ կեանքին ու կենցաղին ծանօթանարու նպատակով, այլի առաջ ունենարով այն հաեցամանը, որ հայկական ողու ըմբռումն ինձ հնարաւորութիւն կույզ աւելի հեշտ կերպով արտայայսերս իմ ստեղծագործութիւնների մէջ հայկական կուրսարան և կեանքը: Հայկական ժողովրդական երգը, անա այն ասպարեզը, որին ես պիտի ենիքիմ ինձ»:

Այդ ոգով էլ նա գործում է այսօր Երևանում, ուր ուսումնասիրում է նա նոր կեանքը, նոր կուլտուրան և ստանում բազմազան ապաւորութիւններ:

1924 նույնամբերին Երևանի պետական կօնսէրւատօրիայի առաջին համերգը նիփրում են Ալ. Սպենդիարեանի ստեղծագործութիւններին: Համերգը զեկավարում է ինքը կօնսպարհորդ, ուր հանդիս է զալիս նր նւազախմբով ու մեններզներով և ունենում գեղարքւաստական մեծ յաջողութիւն:

1925 թիւն անցնում է Բաբու և տալիս մեծ սիմֆոնիքական համերգ, որը մասսայի կողմից մեծ ընդունելութիւն է գտնում: Համերգից յետոյ Սպենդիարեանի պատճին տալիս են մի մեծ բանկէտ, որտեղ հայ կօնսպարհորդ սիրալիք և անկեղծ ընդունելութիւն է գտնում թուրք գեղարքւաստական կողմից:

Բագէ համերգից յետոյ անցնում է նա Թիֆլիս մասսաների համար նորանոր համերգներ կազմելու գեղեցիկ իդէալով առօրուած:

### III. Ազըեցութիւններ

Սպենդիարեանը դեռ եւս մանկութիւնից ենթարկւում է զանազան ազգեցութիւնների: Նրա մանկական հոգու վրայ անջնջելի զրոշմ զնում է նրա զաշնականար մայրը: Ընտանեկան շշշապատից յետոյ նրա վրայ խոր հետքեր են թողնում Ղըրիմ մեղմ և գեղեցիկ քնութիւնը և թաթարական ինքնուրոյն կննցաղն ու երգերը, որոնց ազգեցութեան տակ էլ զրում է նա «Ղըրիմ էսկիզները»: Սակայն նրա երաժշտական ստեղծագործութիւնների վրայ ամենամեծ ազգեցութիւնը թողնում է ուսուական երաժշտութիւնը: Ուսու յայտնի երաժշտաներից Գլյուկան և զիլսաւրապէս իր ուսուցիչ՝ Ռիմսկի-Կորսակով զնում են նրա վրայ իրենց ազգեցութեան խոր զրոշմը:

Եւրոպական երաժշտութեան ազգեցութիւնը չի նկատում նրա ստեղծագործութիւնների վրայ, բայց առանձնապէս ուսումնասիրել է նա երաժշտական հանձնարներին, որպէս զի կատարելազործէի իր երաժշտութեան տեխնիկայի մէջ:

Նրա վրայ ազդում են նաև համաշխարհային պատերազմը և յեղափոխական գէպերից, որոնց ազգեցութեան տակ էլ նա տախիս է հերոսական մօմէնտներ իր վերջին մի քանի գործերի և զինաւորապէս «ԱԼմաստ» օպէրայի մէջ:

#### IV. Համերգային քննադատութիւններ

Գետրոզգայի կօնսէրւատորիայի վարիչ համարեղ ուսւական գոմպօզիտօր Գլազունովը Սպենդիարեանի Գետրոզգադում աւած լիմֆոնիկ համերգի մասին գրում է. «Անցեալ շարաթ փիլարմօնիայի կօնցէրտում մեծ յաջողութեամբ կայացաւ յայտնի երաժշտագէտ Սպենդիարեանի համերգը: Ես գտնում եմ, որ Սպենդիարեանը ժամանակից ամենաաշաղանդաւոր կօմպօզիտօրներից մէկն է և մեծ երաժշտութիւնը: Նրա երաժշտութիւնը վերին աստիճանի բովանդակալից է, ինքնուրոյն, գունաւոր, նուրբ և անոշաբարյ»:

Մի ուրիշ քննադատ՝ Դէմ «Երեկոյեան համար» խորազրով ուսւական թերթում այսպէս է արտայայտում. «Երեկ փիլարմօնիայի մեծ դահլիճում, 1923 թւի Դեկտ. ծին, կայացաւ Ալ. Սպենդիարեանի ստեղծագործութիւնների սիմֆոնիկ համերգը: Ալուաշին անգամ նւազեցին Սուփրա «Ալմաստ» օպէրայից, չտրւկներ հրէական թեմաներից և երգեր: Այդ նոր աշխատանքների մէջ երաժշտութիւնը մոռւմ է անփոփոխ: Թւում էր, թէ այդ ստեղծագործութիւնները, որոնց կրում են տեղական զրոշմ, շուտով պիտի կորցնէն իրենց հետաքրքրութիւնը, բայց իրապէս այլպէս չեղաւ: Սպենդիարեանի ստեղծագործութիւններից հոսում է ոգեւորութեան կենդանի հոսանքը: Նա շատ բազմակողմանի է և ստեղծագործող, ոչ մի բոյզ չի յոգնիցնում լսողի ուշացրութիւնը և շարունակ զրաւում է զարգացնելով նրա մէջ լսելու տրամադրութիւնը: Երաժշտագէտի օրէկստրան ամենահասարակն է: Նա առանց էրստրաւազանա (տարօրինակ, խելազար) տէմբրի<sup>1</sup> յարաբերութիւններից օգուելու կարողանում է ցոլացնել կենդանի գոյներ և վերարտազը ել առանձին հնչինութիւններ: Նրա ճարպիկ և ճաշակով օգտագործումը սրանչացնում է զիտողին: Սպենդիարեանը ցոյց աւեց և օրէկստրի զեկավարի շնորհը. Նրա ամէն մի զգայուն շարժումն անցնում էր զէպի օրէկստր և արտայայտում գունաւոր խաղերով: Առհասարակ ընդունելութիւնը շատ անկեղծ էր և տաք:

«ԳեղԱլինենթի կելանքի» խորազրով ուսւական թերթի № 50ում (1923 թ.) E. S. քննադատն գրում է այսպէս. «Սպենդիարեանի կօնցէրտը ճիշդու ասած ծանօթացրեց Գետրոզգային յայտնի հեղինակի (Պուշկինի) «Երեք արմաւենի» ստեղծագործութեան հետո: Սպենդիարեանն արենեան երաժշտութեան պեղնոզրաֆիկայի զեղեցիկ տիրապետուն է, լարային գործիքների միջոցով: Նա նուրբ ճաշակով, ներդաշնակ անկեղծութեամբ և միաժամանակ հարուստ երևակայութեամբ օժտւած երաժշտագէտ է: Եթէ այդ բոլոր յատկութիւնների վրայ աւելացնենց նրա ոգեւորութիւնը, շերմութիւնը, որ նա զրեց նևազի զեկավարութեան մէջ, պարզ է այն մեծ աշխարհութիւնը, որ նա ունեցաւ: Նրա սրանչելի, նուրբ, պարզ օրօրը կրկնեց երկու անգամ»:

1. Տէմբր (Փ.): մէ և նոյն բարձրութեան ձայնի տարբեր զունաւորումը զանազան մարդկանց կամ զորեների: Ա. Ե.

Մի այլ քննադատա Մօսկվայում, ֆիլարմոնիֆային խորհուրդ է տալիս Սպենդիարեանի համերգը նախաձեռնել Մօսկվայում, ապա աւելացնում է։ «Իր ստեղծագործութեան մէջ Սպենդիարեանը միշտ փոխում է ժողովրդական զեղարւեստի կենդանի աղբիւրին և այդ մտցով նա միանգամայն համակերպւում է նոր յեղափոխական ժամանակի պահանջներին։ Նրա ստեղծագործութիւնները մատչելի են՝ լայն խաւերի հասկացողութեան»։

Այս քննադատութիւնները գեղեցիկ կերպով բնորոշում են նրա երաժշտական մեծութիւնը, նրա տաղանդի ոյժը։

#### V. Ա. Սպենդիարեանի երաժշտական ստեղծագործութիւնների ամբողջական պատկերը

Սպենդիարեան իր երաժշտական քանի և հինգ տարւայ ժամանակաշրջանում զրել է երաժշտական բազմազան կոտրներ, որոնցից շատերը զեռ մնում են անտիպ։ Այդ ստեղծագործութիւնների մեծ մասը զրւած է նազարինութիւնի, իսկ փոքր մասը մենքներին համար։ Նրանց մէջ արևեստագէտը հանդէս է զալիս իր տաղանդի ամրող թափով։ Գծները այժմ նրանց պատկերը։

#### Ա. Տղաբրուծները

1. Օր. «Չորս ոսման» (վիպական բովանդակութեամբ փոքրիկ երգ քննադատական շնչառով), երկաւոր բարձր և երկուար միջակ ձայնի համար, փորտէպիանոյի նազածութեամբ։
2. » «Աստեղ ծափելը», փօրաէպիանոյի նազածութեամբ։
3. » «Երկու պիւս», որիէսուրի համար։
4. » «Չորս ոսման», սինթետայա բարձր ձայնի համար, փորտէպիանոյի նազածութեամբ։
5. » «Չորս ոսման», սինթետայա բարձր ձայնի համար, փորտէպիանոյի նազածութեամբ։
6. » «Պաղեստինի ճակց», առաներութիւն, խառն ձայների համար, որիէսուրի նազածութեամբ։
7. » «Ջնորուն ու յաւերմահարուց» (Խօսք Գորկիի), բալլադա, բառի և որիէսուրի համար։
8. » «Չկուրուն արար», էլեկտր, խոռո խմբ համար, բառ—սօլ որիէսուրի նազածութեամբ։
9. » «Ղրիմի Ա. Սերին, առաների, նազամութիւնի համար։
10. » «Իրեկ Արմանին» (խօսք՝ Լեռտուսիկ), սինթետական պատկեր, որիէսուրի համար 1.
11. » «Երկու ոսման», միջակ և սած ձայնի համար, փորտէպիանոյի նազածութեամբ։
12. » «Danse ancienne neg», որիէսուրի համար։
13. » «Չորս ոսման», բարձր ձայնի համար, որիէսուրի նազածութեամբ։
14. » «Անյարուն», Ղրիմի Մուտքերի պար, փորտէպիանոյի նազածութեամբ։ ✓
15. » Canzonetta, Շութակ և փորտէպիանոյի համար. — b) Barcarolle, վերաբէյլ և փորտէպիանոյի համար։
16. » «Սլոտսովի յիշաստակին», կանտատա \*\*+, խառն խմբի և փորտէպիանոյի համար։
17. » «Քամարական երգ» (խօսք՝ Պուշկին), բարձր ձայնի և փորտէպիանոյի համար։
18. » «Համերգի վար», որիէսուրի համար։
19. » «Չքաւորութիւն», էլեկտր, պրատիկ, միջակ ձայնի համար, որիէսուրի նազածութեամբ։
20. » «Ալիքիմական Գարսակովի յիշաստակեր», սպայի պրէլուդիո (երաժշտական նախերդակ), որիէսուրի համար։
21. » «Երկու մէլոդէկլամացիս» (Զեխովից, բահամատեղծական երկի ընթերցում երաժշտութեամ ձայնակցութեամբ), որիէսուրի նազածութեամբ. — a) «Մենք կ'անգամանանք»<sup>2</sup>. — b) «Հշեցէլիս»։
22. » «Ալիքիմական երգեր», բարձր ձայնի համար, փորտէպիանոյի համար։
23. » «Բազուկալիկ Արման», մարչ կուզագի երգերի համար, որիէսուրի նազածութեամբ։

1.2. Արժանացել են Գլինկայի մրցանակին։ Գլինկան սկիզբ է դրեւ սուսական ազգային երաժշտութեան։

\*\*. Մի բանի ծննաւեց երաժշտական կոտր։

24. Օր. «Այսիսի առաջին փառքի օրը», կրթ., խառն խմբի և օրէւստրի հետ:
25. » «Հայկական հեռուստին երգ», աշխօրի և օրէւստրի համար:
26. » «Քարոզիլ ցաւը», լէզենդա, կատարալույի համար, նաևպահմբի հետ:
27. » «Հարկացայր Աւախա» (Խոս Ձերովի), մէտքէկամացիս:
28. » «Բէթա - բարովիչ», առասպել կոնտրապոսի համար, օրէւստրով:<sup>1</sup>
29. » «Ծուակ սիրում էքն միենացը (Խոս Հայենի):

### Բ. ԱՆԴԻՎԻՆԵՐԸ

1. Օր. «Ղրիմի Էսկիզներ» Բ. սէրիս, սովորա, օրէւստրի համար:
2. » «Ելրկու երգ», Ղրիմի թաթորների, սովորանյի համար, օրէւստրի հետ: — ա) Օրորոցի երգ»: — բ) «Պիետավիճակ»:
3. » «Ալուստ», Ալուստական թէմսով, երգեցի խմբի և օրէւստրի խառն նևազածութեան համար:
4. » «Պրելուգիս և պար», Այշկան թէմս, երգու չուժակի և Փարավիանյի համար:
5. » «Հայիսդ» (Երածշատական կոտր վարժութեան համար), Իրավան թէմսով, փոքր օրէւստրի համար:
6. » «Երգեր ու պարեր Ղրիմի թուրքերի»: — ա) «Երկու երգ», միշակ ձայնի համար, Փարավիանյի կամ շութակախմբի հետ:
7. » «Դէպի սիրաբը», Այշկան մողովդական երգ, բարձր ձայնի համար, օրէւստրի նևազածութեամբ:
8. » «Ո՛ բազ, որիսասարդ Մաւէ», քօման, միշակ ձայնի համար, Փարավիանյի հետ:
9. » «Ալմասո», ազէքա, լոր զործողութեամբ:
10. » «Պօրով» (Նախարան) և «Հայիսդ» (Վ. Կրշաբան):<sup>2</sup>

Երածշտական այդ ստեղծագործութիւններից շատերը նւագել են ոչ միայն Ռուսաստանի, այլ և արևմտեան երկրների սիմֆոնիքական համերգներում:

Այդ երգերը պատմում են ձեզ ժամանակաշրջանի մասին, պարզում են երածշտական այն հոսանքներն ու տրամադրութիւնները, որոնց բղինել են արեկելեան ժողովրդի հոգեբանութիւնից: Նրանց ետևում է ինցը՝ ստեղծագործող արևեստագէտն իր պայծառ և բնորոշ զէմբով:

### VI. Սպենդիարեանի նրաժշտութեամ ընյթը

**Ա. Սպենդիարեանի ստեղծագործութիւնների ամբողջ բնոյթը և ոճը արևելեան կօրորիսը, գունագեղութիւնն է:** Եւ հնչ այդտեղ էլ կայանում է նրա ամենամեծ ծովունիքը: Նա իր ստեղծագործութիւնների մէջ երևան է հանում զիշաւորապէս արեկելեան ժողովրդական հարազատ երգերի և առնասարակ արեկելեան կենդանի երածշտութեան ամբողջ էութիւնն ու զեղեցկութիւնը: Այդ նպատակով էլ նա վերջնում է արեկելեան ազգերի ժողովրդական երգերն ու զրական թէմսները, մշակում նրանց արեկելեան երանգով, ոճով ու հոգեբանութեամբ և կերտում է արեկելեան ինքնուրոյն երածշտութիւնը: Այդ ուղղութեամբ են զրւած նրա «Պրիմի Էսկիզները», «Երեք արմանենի», «Թիրական երգ», «Արեկելեան մերջիս» և «Ակմաս» օպէքան:

Արեկելեան երանգաւորութեան հետ միաժամանակ՝ Սպենդիարեանն օգտագում է նաև եւրոպական երածշտութեան տեխնիկական կատարելութիւններից: Դա նրա խորացումն է:

Առահասարակ նրա ամենասուժեղ ստեղծագործութիւնները նւագախմբի համար են և արդէն նրա տաղանդի ամբողջ ոյժն ու թափը կայանում է լարախմբի մէջ:

1. Առժանացել է Գլինկայի մրցանակին:

2. Ցիշեալ ցանկը մեր խնդրանով կազմել է հնաց ինցը՝ Ա. Սպենդիարեանը:

Նրա աշխատութիւնների մէջ կարեոր տեղ են գրաւում նաև մեներգները, որոնց իրենց մելամազգութ է էլեզիական բնոյթով ցուցահանում են նրա տաղանդի ամենաբնորոշ կողմը: Այդ մեներգների զիմաւոր թէման վերցրել է Սպենդիարեանը զանազան ազգերի ժողովրդական երգերից: Այդ պատճառով էլ նրանց խոր տպաւորութիւն են թողնում:

## VII. ԱԼ. Սպենդիարեանի երաժշտութեան զբացմունքը

Ալ. Սպենդիարեանի առաջին շրջանի ստեղծագործութիւնների մէջ զերազանցորդն իշխում է լիրիզմը իր մելամազգութ, նուրբ և էլեզիական բնոյթով: Այնտեղ կօմպօգիտորը ցուցահանում է իր ներքին հոգեկան աշխարհը, արտայայտում իր զգացումներն ու խոհերը: Միաժամանակ ցոլացնում է նա ժողովրդի հոգին, մասսայի կեանցը և շաղկապում իր հոգերանութեան հետ:

Այդ շրջանի ստեղծագործութիւնների գոյները աւելի պատկերաւոր են, թափանցիկ, մեղեւ, խորը, ընթացյալ և շրջածուն:

Նրա երկրորդ շրջանի ստեղծագործութիւնների մէջ որոշ տեղ է գրաւում դրամատիզմը: Այդ ուղղութեամբ է զրաւծ նրա «Ալմաստ» օպերան, ուր տալիս է նա դրամատիգական, հերոսական ուժեղ և բուռն մօմէնտներ:

Այժմ անցնենց նրա երաժշտական երկու գոհաքների՝ «Երեք Ալմասենու» և «Ալմաստ»ի բովանդակութեան:

Արև Երևան

(Շարարայելի)

## Մ . - Ռ . ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ա.Մ.Ա.Վ.Ե.Բ.Ձ.Հ.ՀԱՆԴԵՍԸ

○ \* ○

Յանկարծածին մոլեգին փոթորկէ մը վերջ, կապոյտ երկնբով՝ թիէփուկեան դահնին իր գեղանկար առաստաղին տակ կը համախմբէր զենետարնակ հայութիւնը, այն սրբազան յարկին տակ՝ ուր կը թեւածէին բերկրալից՝ Մուրատի և Շափայելի ազգասէր անմահ ոգիները:

Մըրիկն ու անոր յաջորդած անդորրութիւնը խորհրդածէլ տուին իսկոյն տիրանոյց պատկեր մը օրուան տեսարանէն, կրակի, սուրբ մահապոյժ աւերածներէն պլծած հայուն վերջին և միակ յոյսերը, այդ անոյշ «զրգարանին» մէջ, որ «Հա-

յաստանեայց բնագաւառի» բովանդակ գեղն և ոգին ունի, Մ. Ռ.ի գրկին մէջ, Մեծին Միսիթարայ սերունդին շնչով՝ խաղաղութիւն, լոյս, կեանց գտան, երջանիկ քան շատ մը տասնեակ հազարներ որ դեռ ցիր ու ցան կեանցի ու մահուան երկունքը կը կրնն: Ու այդ օրը, այդ ժամուն, այդ պատանիները ցաշակազմ և առողջ մարմույթ, նրացած ու հարստացած հոգիով մը այն ամէն բանով՝ որ զերազանցապէս բարձր և սուրբ է, կրօնիկ և ազգին սիրով, պատրաստ էին պարզել իրենց թուիչը գէպի կեանց մը յոյսերով լի, ինչպէս թոշնիկներ որ կը ալանան վերջին անդամ մայրենի բնոյնէն գուրս՝ սորված թոշիլ ու ապրիլ բայց կը մնար զեռ յետին հանդիսաւոր ժամը, յորուամ հօր մը խրախոյան